

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՄԱՊՁԲ-20-20/1-1**

ք. Երևան

«14» 01 2020 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ՊԱՊ ԵՎ ԹՈՒ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Գրիգորյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի առավելագույն գինը կազմում է 180000000 /հարյուր ութսուն միլիոն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և անկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատակարարված ապրանքների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ապրանքների մատակարարման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն 92500000 /իննսուներկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

ՆԳ-ն ապրանքի մատակարարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատակարարված ապրանքի առավելագույն միավորի գինն է:

Բ-ն ապրանքների մատակարարման քանակն է:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³² Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ թողութների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

³² Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ

ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ծնով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14. Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈւ ինժեներական գործերի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բազրկանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ




ՎԱՃԱՌՈՂ

ՊԱՊ և ԹՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շիրակի 17/2
Արցախբանկ ՓԲԸ
Հ/Հ 22317007051800
ՀՎՀՀ 03809214
Տնօրեն

2/46

Բ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անվանումը		Միասնական անվանացանկի CPV կոդը	Չափի միավորը
Ձևազան պահեստամասեր (ինժեներական /ճանապարհաշինական/ րեֆինիկայի վերանորոգման պահեստամասեր)		3491150/734/9/1	դրամ
Այդ թվում			
Հ/հ	Անվանումը	Կարալոգային համար	Չափի միավորը
ԲՈՒԼՊՈՋԵՐ Բ-10, S-170, 130			
1	Միջադիր (պղնձյա)	40201	հատ
2	Ջրի շափիկի օղ	40843	լրկզմ
3	Կափույրի կափարիչի ներդիր	700-40-2896	հատ
4	Մանժետ 1,2-200x240-1 Բ-10	ԳՕՍՏ 8752-79	հատ
5	Գլղոն երկկողապատ	24-21-170ՍՊ	հատ
6	Օժանդակիչ գլղոն Բ-10	50-21-416ՍՊ	հատ
7	Օժանդակիչ գլղոն S-130	24-21-171ՍՊ	հատ
8	Բոցամուղ	14-69-117-ՍՊ	հատ
9	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի) մետաղակ.	16121	հատ
10	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	2224ԿՄ	հատ
11	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	228Ա	հատ
12	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	70-42314	հատ
13	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	70-32417	հատ
14	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	70-32612	հատ
15	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	118	հատ
16	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	70-32315	հատ
17	Դանակի հեղյուս և մանեկ	Մ27	լրկզմ
18	Գործարկիչ շարժիչ	ՊԴ-23	հատ
19	Կարբյուրատոր Կ-125լ	Կ-125	հատ
20	Շղթայակցման կցորդիչ ՊԴ-23	17-73-54	հատ
21	Ռադիատորի կարճախողովակ	42701	լրկզմ
22	Փոխանցումների փոխարկման երկժանի (դարձիչ)	50-12-565	հատ
23	Դարձիչի մատ	50-12-581	հատ
24	Մագնետո Մ-149Ա1 (Մ-149Ա1-3728.000)	Մ-149Ա1	հատ
25	Փոկ հովիարի	11x16x1650	հատ
26	Փոկ գեներատորի	11x12.5x1090	հատ
27	Գլանների բլոկի գլխիկ	51-02-3ՍՊ	հատ
28	Պարկուն Զ-145	1466	հատ
29	Պարկուն Զ-150	51-0182	հատ
30	Մխոց Զ-145	51-03-23	հատ
31	Մխոց Զ-150	16-03-44	հատ
32	Մխոցի օղ Զ-145	ՍՏ51-03-115ՍՊ	լրկզմ
33	Մխոցի օղ Զ-150	033404-2	լրկզմ
34	Երկժանանիվ	20-19-24	հատ
35	Տանող անիվի գամասեղների հավաքակազմ	24-19-22	լրկզմ
36	Տարվող կցորդիչի սկավառակ S-130	18-14-135ՍՊ	հատ
37	Տանող անիվ Բ-10	50-19-160-1	լրկզմ

38	Տանող անիվ S-130	50-19-99	լրկվմ
39	Ձգիչ անիվ P-10 (ծախ)	50-21-305-05UՊ	լրկվմ
40	Ձգիչ անիվ P-10 (աջ)	50-21-306-05UՊ	լրկվմ
41	Ձգիչ անիվ S-130	50-21-212	լրկվմ
42	Թերթիկավոր զսպան S-130	50-20-103UՊ	հատ
43	Հենակային զսպան P-10	50-20-125UՊ	հատ
44	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	50-12-246UՊ	լրկվմ
45	Փոխանցման տուփի ներքևի լիսերի հավաքակազմ	50-12-224UՊ	լրկվմ
46	Հարթաշերտիկի հիդրոդան P-10	131-26-108-02UՊ	հատ
47	Հարթաշերտիկի հիդրոդան S-130	50-26-570UՊ	հատ
48	Հարթաշերտիկի շեղածման հիդրոդանի նորոգման լրակազմ ԳՑ 160x80	ԳՑ 160x80 (50-50-226)	լրկվմ
49	Փխրեցուցիչի հիդրոդանի նորոգման լրակազմ	50-50-225UՊ	լրկվմ
50	Թրթուր	50-22-2	հատ
51	Թրթուրի հավաքակազմ (աջ, ծախ)	2Դ-50-22-9UP	լրկվմ
52	Ռադիատորի հավաքակազմ	ԴՊ80-1301010	հատ
53	Յուղի պոմպ	29-09-124UՊ	հատ
54	Բարձր ճնշման վառելիքի պոմպի կարգավորիչ	51-06-14UՊ	լրկվմ
55	Մեկնարկիչ 42.3708.000	42.3708.000	հատ
56	Գլոբն միակողմապատ	24-21-169UՊ	հատ
57	Գլանների գլխիկի միջադիր	51-02-107UՊ	հատ
58	Թրթուրի հեղուա և մանեկ	U20x1,5x62/30326-1	լրկվմ
59	Կողային դանակ (ծախ)	80-52-111-02	հատ
60	Կողային դանակ (աջ)	80-52-112-02	հատ
61	Կարտերի միջադիր	700-40-4947	լրկվմ
62	Շարժիչի միջադիրների լրակազմ	Ո/կ Դ-160	հատ
63	Կարդանային լիսեռ	18-14-77-1	հատ
64	Կարդանային լիսեռի կցորդիչ	20-14-23	հատ
65	Միջնամասի դանակ	70-52-13	հատ
66	Ներդրակ արմատական	Ա-23.01-103-160սքԱ	Լրկվմ
67	Ներդրակ շարժաթևի	Ա-23.01-100-160սքԱ	Լրկվմ
68	Ներդրակ շարժաթևի ՊԴ-23	Ա23,01-54-130սքՊ2Ն	Լրկվմ
69	Ջրի շապիկի խողովակ	2218	հատ
70	Սկավառակ ՊԴ-23	738-4UՊ	հատ
71	Վառելանյութի զտիչ տարր S-130, P-10	51-70-146UՊ	հատ
72	Տուրբոմեխանիկ SԿԲ 11 ն3	SԿԲ 11ն3	հատ
73	Տուրբոմեխանիկ SԿԲ 8.5U3	51-54-10UՊ	հատ
74	Փոխանցման տուփի նորոգման լրակազմ ԿՊՊ S-130	1303	հատ
75	Փխրեցուցիչի կանգնակ	50-50-104UՊ	Լրկվմ
76	Յուղի զտիչ տարր	50-26-490 UՊ	հատ
77	Օդի զտիչ տարր	Ա41.10.000-02	հատ
78	Ջրահովացուցիչի հավաքակազմ	130Մ.13.010-1Տ	հատ
79	Տանող անիվ սեղմենտով S170,P10	50-19-182 UՊ	հատ
80	Անվակունդ	50-19-145UՊ	հատ
81	Տանող անիվի հեղուա և մանեկ	U20x1,5-62	հատ
82	Կողային պտույտափոխանցիչի պատյան ծախ S170	24-19-35	հատ
83	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ S170	24-19-36	հատ
84	Կողային պտույտափոխանցիչի պատյան ծախ P10	50-19-141	հատ
85	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ P10	50-19-142	հատ
86	Կարտեր առջևի S170,P10	51-01-156UՊ	հատ
87	Կարտեր հետևի S170,P10	51-01-36	հատ
88	Կցաշուրթ /Ֆլանեց/ P-10	50-19-144	հատ
89	Կցաշուրթ /Ֆլանեց/ S-170	24-19-30	հատ
90	Մակարումային ժանանիվ P-10	50-19-150	հատ
91	Մակարումային ժանանիվ S-170	24-19-29	հատ

92	Մակարոնային ժանանիկի առանցքակալ S-170	70-12 3154Մ	հատ
93	Մակարոնային ժանանիկի առանցքակալի պատյան S-170	24-19-31	հատ
94	Մակարոնային ժանանիկի առանցքակալ P-10	70-32315	հատ
95	Մակարոնային ժանանիկի առանցքակալի պատյան-փակադակ P-10	50-19-147	հատ
96	Մակարոնային ժանանիկի առանցքակալ S-170	70-42314	հատ
97	Մակարոնային ժանանիկի առանցքակալ P-10	118	հատ
98	Երկժանանիկի լիսեռ P-10	50-19-148	հատ
99	Երկժանանիկի ժանանիկ P-10	50-19-149	հատ
100	Երկժանանիկի միջուկ և մանեկ P-10	50-19-157	հատ
101	Երկժանանիկի միջուկի առանցքակալ	213	հատ
102	Երկժանանիկի առանցքակալ	70-32417Մ	հատ
103	Երկժանանիկի առանցքակալ	70-32612Կ	հատ
104	Երկժանանիկի առանցքակալի պատյան	50-19-145	հատ
105	Երկժանանիկի առանցքակալ	70-42612ԿՄ	հատ
106	Երկժանանիկի առանցքակալ	70-42415ԿՄ	հատ
107	Երկժանանիկի առանցքակալի պատյան	24-19-38	հատ
108	Վերջնամասի առանցքակալ ծախ	21-19-1	հատ
109	Վերջնամասի առանցքակալ աջ	21-19-2	հատ
110	Կցորդիչի սերվոմեխանիզմ	50-15-118 ՍՊ	հատ

ԲՈՒԼՊՈՋԵՐ ԿԱՄԱՅՈՒ Դ 355

111	Օդի գտիչի տարր	6128-81-7042	լրկզմ
112	Վառելիքի գտիչ	600-311-8281	հատ
113	Տուրքաճնշակ	6502-12-9004	լրկզմ
114	Գլանների գլխիկ	6128-11-1012	լրկզմ
115	Գլանի խցիչ	6127-21-2251	լրկզմ
116	Գլոն երկկողպատ	195-30-00453	հատ
117	Գլոն միակողպատ	195-30-00440	հատ
118	Օժանդակիչ գլոն	195-30-00106	հատ
119	Հարթաշերտի բարձրացման հիդրոլան	195-63-13700	հատ
120	Սեզմենտի հեղույս և մանեկ	195-27-12632	լրկզմ
121	Ձգիչ անիկ	195-30-00283	հատ
122	Ձգիչ անիկի նորոգման լրակազմ	195-30-13251	լրկզմ
123	Թրթուրի հավաքակազմ	195-32-02-709	լրկզմ
124	Թրթուրի ձգման մեխանիզմ	195-30-14170	հատ
125	Արգելակման թմբուկ	195-22-11114	հատ
126	Ջրի պոմպ	6127-61-1008	հատ
127	Ընդհանուր ականատ	195-32-21141	հատ
128	Բոյթ ընդհանուր	195-32-21151	հատ
129	Բոյթ հիմնական	195-32-31390	հատ
130	Թրթուրի օղակ	195-32-11127/37	լրկզմ
131	Ձգափուկ հավաքական	195-71-00094	հատ
132	Տանող համակարգ	195-27-11237	հատ
133	Գլխավոր ականատ	195-32-31380	հատ
134	Հարթաշերտի դանակի հեղույս և մանեկ	195-71-11451/25	լրկզմ
135	Հարթաշերտի կողային դանակ	195-71-11173/83	հատ
136	Հիդրավլիքի գտիչ	175-60-27380	հատ
137	Ձգիչ անիկի լիսեռ	195-30-13251	հատ
138	Յուղի գտիչ	600-211-1230	հատ
139	Յուղի գտիչ	3313283	հատ
140	Ներդրակ արմատական	6127-21-8071	լրկզմ
141	Ներդրակ շարժաթևի	6127-31-3042	լրկզմ

ԲՈՒԼՊՈՋԵՐ ԵԱՆՏՈՒՒ ՍԴ 42-3

142	Թագազյխիկի մատ	175-78-21740	հատ
143	Երկկողապատ գլղոն	31Ի-40-22000	հատ
144	Միակողապատ գլղոն	31Ի-40-21000	հատ
145	Հիդրավիքի գտիչ	Պ175-60-27380	հատ
146	Տրանսմիսիայի գտիչ	175-49-11580	հատ
147	Վառելիքի գտիչ	6,126E+11	հատ
148	Օ-օղ	195-27-12210	հատ
149	Շարժիչի վերևի միջադիրների հավաքակազմ	3800728	լրկզմ
150	Շարժիչի ներքևի միջադիրների հավաքակազմ	4089391	լրկզմ
151	Գլանի պարկուճի կիսարար խցուկ	3088298	հատ
152	Գլանի պարկուճի կիսարար խցուկ	3081489	հատ
153	Գլանի պարկուճի կիսարար խցուկ	3011076	հատ
154	Գլանի պարկուճի կիսարար խցուկ	3014668	հատ
155	Գլանի պարկուճի կիսարար խցուկ	4000504	հատ
156	Մխոցի օղերի լրակազմ	4955975	լրկզմ
157	Շարժաթևի ներդրակներ	205840	լրկզմ
158	Արմատական ներդրակների հավաքակազմ	AR12271	լրկզմ
159	Ծնկաձև լիսեռի խցուկ	3648161	հատ
160	Ծնկաձև լիսեռի խցուկ	3005886	հատ
161	Շարժաթև	3811994	հատ
162	Ծնկաձև լիսեռ	3347569	հատ
163	Բլոկ ցիլինդրա	3088301	հատ
164	Գոլովկա քլոկա	3176619	հատ
165	Բոցամուղ	3016676	հատ
166	Տուրբոկոմպրեսոր	3803452	հատ

. ՇԱՐՇԻՉ ՏՄՁ 8486.10-02

167	Օղի գտիչի տարր	6510-1109080	հատ
168	Վառելիքի գտիչի տարր	840.1117040-01	հատ
169	Յուղի գտիչի տարր	840.1012040-14	հատ
170	Շարժաթև	8401100405	հատ
171	Ներդրակ արմատական	840100517	լրկզմ
172	Ներդրակ շարժաթևի	8401004058	լրկզմ
173	Մեկնարկիչ	2501.3708-21	հատ
174	Հրիչի ծող	840.1007 174-02	հատ
175	Ծնկաձև լիսեռի վերևի հենակի տափօղակ	8401005193	հատ
176	Ծնկաձև լիսեռի ներքևի հենակի տափօղակ	840.1005194-10	հատ
177	Բաշխիչ լիսեռ	8461006015	հատ
178	Գլանների գլխիկի միջադիր	840.1003213-02	հատ
179	Կարտերի միջադիր	8421009072	հատ
180	Վառելիքի ներցայտման առաջանցման կցորդիչ	842.1121010-10	հատ
181	Շարժիչ	8486.10-02	լրկզմ
182	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	171-20	հատ
183	Փոկ I-11x21-1950	11-21-14-1950	հատ
184	Ջրի մեխանիկական տվիչ	ՌԻՏ-200Դ	հատ

ԲՈՒԼՊՈՋԵՐ ԴՏ - 75

185	Գլանի խցիչ Ա-41	արտ. 406	լրկզմ
186	Ներդրակ արմատական Ա-41	Ա23.01-98-20	լրկզմ
187	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	Ա-41/Ա01	հատ
188	Վառելիքի մղման պոմպ	16-Ա30-8Ա-01	հատ
189	Փոշարար	11ՏԱ-20ս 2-02	հատ
190	Գործարկիչ շարժիչ ՊԴ-10	Դ24 Ա01-4	լրկզմ
191	Մեկնարկիչ ՊԴ-10-ի	Ատ362-3708000	հատ

192	Ռադիատորի կարճախողովակ	ԴՏ75, Ա41	լրկվմ
193	Հարթաշերտի դանակ	150x16x18	լրկվմ
194	Թրթուրի մատ	Ա34-2-01Գ	հատ
195	Թրթուրի օղակ	77. 34. 501	հատ
196	Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ	79.39.040Դ	լրկվմ
197	Առանցքակալ 7311Կ	ԳՕՍՍ 333-79	հատ
198	Առանցքակալ 7313Կ	ԳՕՍՍ 333-79	հատ
199	Առանցքակալ 7909Կ1	ԳՕՍՍ 333-79	հատ
200	Պահող գլուխ	85.33.002A	հատ
201	Գլուխի ակ	54.31-021Ի	հատ
202	Գլուխի առանցք	85.31.018Ք-01	հատ
203	Հարթաշերտի հիդրոզան (միագլան)	80.56x970.31	հատ
204	Հարթաշերտի հիդրոզան (երկգլան)	80.50x710.17	հատ
205	Հիդրոզանի նորոգման լրակազմ	ՑՍ - 75	լրկվմ
206	Հիդրոզանի նորոգման լրակազմ	ՑՍ - 110	լրկվմ
207	Տանող անիվ	77.39.132	հատ
208	Տանող անիվի լիսեռ	77.39.012Ա	հատ
209	Ուղղորդող անիվ աջ հավաքակազմ	85.32.001	հատ
210	Ուղղորդող անիվ ձախ հավաքակազմ	85.32.002	հատ
211	Օդի ցուխ տարր	ԴՏ 75	հատ
212	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	162.39.103-02	հատ
213	Ռադիատորի միջուկ ԴՏ-75	85ԼԱ.1301020	հատ
214	Տուրբոճնշակ	ՏԿԴ 8.5Ա-6	հատ
215	Տուրբոճնշակ	ՏԿԴ 8.5Ա1	հատ
216	Սալյակային կախոցի հավաքակազմ (աջ)	85.31.002	հատ
217	Սալյակային կախոցի հավաքակազմ (ձախ)	85.31.001	հատ
ԷՔՍԿՐԻՍՏՈՐ ԷՕ - 2621, HYUNDAI R260LC-9S, ԳՐԵՅԴԵՐ ԴՁ 99,122,143			
218	Փոշարար ԷՕ-2621	6Ա1-20ս2-40	հատ
219	Սուզակային զույգ ԷՕ-2621	ՈՒ16Ա-15	հատ
220	Յուղի պոմպ ԷՕ-2621	245-1403010	հատ
221	Վառելիքի ցածր ճնշման պոմպ ԷՕ-2621	4ՈՒՏՆԱՄ-S-1111005	հատ
222	Կողային դանակ ԷՕ-2621	Դ-579.0100-07	լրկվմ
223	Միջնամասի դանակ ԷՕ-2621	Դ-579.0100-06	լրկվմ
224	Հիդրոզանի հարթաշերտի ԷՕ-2621	13.6500.000	հատ
225	Հիդրոզանի սլաքի ԷՕ-2621	13.6100.000	հատ
226	Հիդրոզանի սլաքի թեքման ԷՕ-2621	13.0920.000	հատ
227	Հիդրոզանի հենակի բացման ԷՕ-2621	13.6110.000	հատ
228	Հիդրոզանի շերտի և թևի ԷՕ-2621	13.6600.000	հատ
229	Հիդրոզանի նորոգման լրակազմ ԷՕ-2621	110x56x1120	լրկվմ
230	Փոխանցման տուփի նորոգման լրակազմ ԷՕ-2621	238-Դ-1700001-04	լրկվմ
231	Ջրի պոմպ ԷՕ-2621	240-1307010	հատ
232	Վառելիքի ցուխ ԷՕ-2621	ՖՏ020-1117010	հատ
233	Յուղի ցուխ ԷՕ-2621	240-1404010-Ա	հատ
234	Գլանների բլոկի գլխիկ ԷՕ-2621	245-1003015-Բ1	հատ
235	Ծնկաձև լիսեռ ԷՕ-2621	245-1005020-Բ	հատ
236	Ծնկաձև լիսեռ ՎՏ2-2048	Դ130-1005011	հատ
237	Ամկադոր Ե-702 փոխանցման տուփի նորոգման լրակազմ	PK245-1701000	հատ
238	Ամկադոր Ե-702 սեղմովի սկավառակ	245-1601090	հատ
239	Ամկադոր Ե-702 տարվող կցորդի սկավառակ	245-1602052	հատ
240	Թրթուրի հեղույս և մանեկ R260LC-9S	81EM-20020/81NG-26620/	հատ
241	Հովհարի փուկ R260LC-9S	8RK 1621	հատ
242	Թափաղիկի մատ R260LC-9S	E262-5004	հատ

